

ԱՆԳԼԵՐԵՆԻ, ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՌՈՒՄԵՐԵՆԻ ՑԱՎԱՆԻՇ
ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՂԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու կողմից աշխարհի յուրացումը սկսվում է լեզվի յուրացմանը գուցենթաց: Մարդն առաջին հերթին գիտակցում է իր մեջ եւ շուրջը գտնվող այն երեւելիքներն ու գործընթացները, որոնք անմիջական ազդեցություն են գործում նրա ինքնազգացողության վրա: Ցավն այն առաջնային զգացողություններից է, որոնք պայմանավորում են կյանքի վերաբերյալ նրա պատկերացումները, նրա կյուրական եւ բարոյական արժեքները:

Ցավի փորձը, սկսվելով ֆիզիկական զգացողություններից, դրանցով չի սահմանափակվում եւ տարածվում է միջանձնային հարաբերությունների, մարդու եւ հասարակության հարաբերությունների վրա: Ցավն, այդպիսով, կենսահոգեբանասոցիալական երեւույթ է (Чижова X. A., 2010: 567):

Գիտակցության ոլորտում կարելի է խոսել ցավի կարգի մասին, որը լեզվագիտակցության մեջ կենտրոնանում է որպէս լեզվական կարգ՝ դառնալով շրջապատող աշխարհի հասկացութայնության ձեւ: Ցավի երեւույթը սահմանելով որպէս լեզվական կարգ՝ մենք գիտակցում ենք այն, որ յուրաքանչյուր ազգային լեզու եւ մշակույթ իրենց հետքն են թողնում անհատի կողմից ցավի ընկալման վրա: Անհատի կողմից ցավի ընկալումը, իմաստավորումը, արտահայտումն ու հաղթահարումը ձեւավորվում են տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող եւ տվյալ լեզվում ամրագրված կարծրատիպերի հիման վրա: Այնպիսի իրավիճակներում, որտեղ ցավը առօրյայի մաս է կազմում, ցավի շեմը շատ բարձր է եւ ցավի հաղթահարման աստիճանի չափանիշը նույնիսկ անձի գնահատման մաս է դառնում: Ցավի զգացողությունը բնականաբար ունի արտահայտման լեզվական միջոցներ: Լինելով անձնական, ներքին իրադարձություն, որը չի կարող դիտարկվել ուղղակիորեն, ցավի գնահատումը հաճախ կառուցվում է այն զգացող սուբյեկտի հաղորդումների վրա: Հետեւաբար ցավի արտահայտությունն այնքան ուղղակիորեն եւ սերտորեն է կապված լեզվի հետ, որ լեզուն ոչ միայն հաստատում է ցավի առկայությունը եւ նկարագրում այն, այլեւ ցավի զգացողության մաս է դառնում (Pain Language, 2005: 58-67):

Ժամանակակից լեզվաբանության խնդիրներից մեկը լեզվի բովանդակային կողմի ուսումնասիրությունն է: Այս առումով հատուկ արդիականություն է ձեռք բերում բայական բառապաշարի իմաստաբանական տիպաբանության խնդիրը, քանի որ բայիմաստի ուսումնասիրության գործըն-

թացում դուրս են բերվում բայական բառույթների ներածային հասկությունները, որոնք անհրաժեշտ են դառնում այս կամ այն տեսակի լեզվական հաղորդակցությունների ժամանակ:

Բայի գործածումը կոնկրետ իրադարձության կարգայնացման համար նշանակում է նրա (բայի) վերագրումը մի ոլորտակի կարգի, որի շրջանակներում իմաստավորվում է ուսումնասիրվող միավորը: Դա իր հերթին ենթադրում է հենց բայի կարգայնացում լեզվում՝ որպես վերագրում որոշակի բառային եւ բառաբերականական դասի, որոնք միավորված են ընդհանուր նշանակիտական գործառույթով: Արդյունքում իրադարձության կարգայնացումն արտացոլվում է բայի կարգային նշանակության մեջ (Болдырев Н.Н. 1997, 48-51): Բայերի մեկ այլ կարեւոր առանձնահատկությունն էլ այն է, որ նրանք ցույց են տալիս գործողություն, վիճակ, հարաբերություն, գործընթաց, ինչպես նաեւ դրանց փոփոխություն եւ կայունություն՝ տարածության եւ ժամանակի կտրվածքով, որի հետեւանով առաջանում են բառիմաստային մի շարք տարբերակներ:


Բայերի իմաստային դասակարգումը բավականաչափ ուսումնասիրված, սակայն միեւնույն ժամանակ վիճահարույց թեմա է, որը արտահայտվում է այն տարբեր մոտեցումներում, որոնք կան բայերի իմաստային դաշտերի սահմանագատման խնդիրների լուծման մեջ:

Իրենց արտահայտած հասկացությունների ծավալի տեսակետից բայերը սովորաբար բաժանվում են երկու խոշոր խմբերի՝ ֆիզիկական գործողության բայեր եւ հոգեկան գործունեություն արտահայտող բայեր: Այս խմբերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է ենթախմբերի: Այսպես օրինակ՝ հոգեկան գործունեություն արտահայտող բայերի մեջ տարբերակում են ցանկության, ընկալման, ուշադրության, հոգեվիճակի, հոգեկան ապրումների, մտածողության, իմացության, հիշողության եւ այլ իմաստներ արտահայտող բայեր եւ այլն (Шилыева, Т.Ю., // <http://lingvomaster.ru/files/212.pdf>, -10.10.2011):

Մույն հոդվածում ներկայացվում է անգլերենի 140, հայերենի 94, ռուսերենի 51 այն բայերի իմաստային դասակարգման փորձը, որոնք ուղիղ կամ փոխաբերական իմաստով ցավանիշ են ըստ իրենց բառարանային սահմանման կամ համապատասխան ազգային կորպուսներից վերցված տվյալների: Դասակարգումը կատարվել է մի քանի սկզբունքով.

1.1. Առաջին մոտեցմամբ բոլոր բայերը բաժանվել են երկու մեծ խմբի՝ ցավի զգացողություն արտահայտող եւ ցավի զգացողության արտահայտություն նշող բայեր: Նշենք, որ առաջին խմբի բայերն իրենց հերթին հնարավոր է բաժանել երեք ենթախմբի՝ ֆիզիկական ցավ արտահայտող բայեր (անգլ.՝ *beat, croak*, հայ.՝ *մզգալ, նվաղել*, ռուս.՝ *гудеть, урчать*), ֆիզի-

կական և հոգեկան ցավ արտահայտող բայեր (անգլ.՝ *ail, hurt*, հայ.՝ *մղձկել, տառապել*, ռուս.՝ *страдать, терпеть*) և հոգեկան ցավ արտահայտող բայեր (անգլ.՝ *grieve, regret*, հայ.՝ *տվայտել, զղջալ*, ռուս.՝ *каяться, отчаяться*)։
Գծապատկեր 1.



Ցավի զգացողության արտահայտություն նշող բայերի տոկոսային հարաբերությունն անգլերենում կազմում է ուսումնասիրության նյութ հանդիսացող բայերի 42%-ը (59/140), հայերենում՝ 48%-ը (47/97), ռուսերենում՝ 37%-ը (19/51)։

Համապատասխանաբար, ցավի զգացողություն արտահայտող բայերն անգլերենում կազմում են ցավանիշ բայերի 58% (81/140), հայերենում՝ 51% (50/97), ռուսերենում՝ 63% (32/51), որից՝

- ֆիզիկական ցավի զգացողություն ցույց տվող բայերը. անգլերենում՝ 42% (59/140), հայերենում՝ 36% (35/97), ռուսերենում՝ 47% (24/51),
- ֆիզիկական և հոգեկան ցավ արտահայտող բայերը. անգլերենում՝ 6% (8/140), հայերենում՝ 5% (5/97), ռուսերենում՝ 4% (2/51),
- հոգեկան ցավ արտահայտող բայերը. անգլերենում և հայերենում՝ 10% (համապատասխանաբար՝ 14/140, 10/97), ռուսերենում՝ 12%(6/51)։

Ընդ որում, խմբի ներսում այս բաշխումը երեք լեզուներում ունի հետևյալ պատկերը.

- ֆիզիկական ցավի զգացողություն ցույց տվող բայերը. անգլերենում՝ 73% (59/81), հայերենում՝ 70%(35/50), ռուսերենում՝ 75%(24/32),
- ֆիզիկական և հոգեկան ցավ արտահայտող բայերը. անգլերենում և հայերենում՝ 10% (հմմտ.՝ 8/81, 5/50), ռուսերենում՝ 6% (2/32),

- հոգեկան ցավ արտահայտող բայերը. անզլերենում՝ 17% (14/81), հայերենում՝ 20%(10/50), ռուսերենում՝ 19% (6/32):

1.2. Հաջորդ բայով փորձ ենք արել յուրաքանչյուր խմբում դասակարգել բայերը՝ ըստ ցավի եւ որեւէ լրացուցիչ իմակի առկայության/ բացակայության, ինչը սակայն հաջողվել է միայն ֆիզիկական ցավ արտահայտող բայերի դեպքում: Ըստ այդ չափանիշի ֆիզիկական ցավ արտահայտող բայերը դասակարգվել են հետևյալ կերպ.

1. զուտ ցավ (անզլ.՝ *labour, pang*, հայ.՝ *նվալ, մրմնալ*, ռուս.՝ *мозжить, ныть*)
2. Ցավ + Ամբողջականության խախտում/ Ֆունկցիոնալության կորուստ (անզլ.՝ *swell*, հայ.՝ *բքնել, ճաքել*, ռուս.՝ *ломить, пухнуть*)
3. Ցավ + Ջերմաստիճանի փոփոխություն (անզլ.՝ *burn, freeze*, հայ.՝ *եռալ, մրսել*, ռուս.՝ *гореть, мерзнуть*)
4. Ցավ + Շարժում (անզլ.՝ *quiver, fidget*, հայ.՝ *դողալ, սրթսրթալ*, ռուս.՝ *дрожать, знобить*)
5. Ցավ + Չայնի արձակում (անզլ.՝ *belch, cough*, հայ.՝ *բխկալ, հազալ*, ռուս.՝ *бурчать, рыгать*)
6. Ցավ + Shաճ գործողություն /զգացողություն (անզլ.՝ *disgorge, vomit*, հայ.՝ *ործկալ, փսխել*, ռուս.՝ *рвать, тошнить*)

2. Երկրորդ մոտեցմամբ ֆիզիկական ցավ արտահայտող բայերը դասակարգվել են **ըստ ցավի տեղայնացման**, համաձայն որի ցավ կարելի է զգալ.

- մարմնի առանձին մասում (անզլ.՝ *stifle, belch*, հայ.՝ *բքնել, զկոտալ*, ռուս.՝ *перхаться, икать*) Հմնտ.՝ **belch- intransitive verb** 1: to expel gas suddenly from the stomach through the mouth 2 : to erupt, explode, or detonate violently 3 : to issue forth spasmodically : gush

բքնել, չբ. -1. Գազեր հավաքվելուց փորը ուռչել: 2. Շատ ուտելուց կամ վատ մարսելուց անհանգստություն զգալ:

перхаться-Покашливать, кашлять от ощущения щекотания или раздражения в горле.

- ամբողջ մարմնում (անզլ.՝ *flinch, tremble*, հայ.՝ *սարսռալ, նվաղել*, ռուս.՝ *трепетать, трестти*) Հմնտ.՝ **flinch- intransitive verb** : to withdraw or shrink from or as if from pain : WINCE; also :to tense the muscles involuntarily in anticipation of discomfort

սարսռալ, **սարսռել**, չբ. 1. Սարսուտ՝ դող զգալ, դողդողալ, ցնցումների մեջ լինել (երկյուղից՝ ցրտից եւն): 2.

Մրսելուց դողալ, սրթսրթալ: 3. Օփալ, դողդոջել, շարժվել:

4. սարսել, ցնցվել: 5. Խաղալ, վետվետել:

трепетать, -ещу, -ешь; несов. 1. (1 и 2 л. не употр.); Колебаться, дрожать. 2. Испытывать дрожь, сильное волнение. Г. всем телом. Т. от ужаса. 3. Испытывать страх, боязнь.

- չտարբերակված (անգլ.՝ *freeze, suffer*, հայ.՝ *եռալ, թմրել*, ռուս.՝ *коченеть, млеть*) Հմմտ.՝ **suffer- intransitive verb** 1 : to endure death, pain, or distress 2 : to sustain loss or damage 3: to be subject to disability or handicap

եռալ, 4. մարմնի վրա այրող բոր, մարմնը զգացվել:

коченеть-Мерзнуть от сильного холода, терять чувствительность, подвижность; застывать. | Холодея, становиться твердым (о трупe).

Հարկ է նշել, որ դասակարգման այս սկզբունքը կիրառելի չէ բայերի մյուս խմբերի (հոգեկան ցավ, ֆիզիկական եւ հոգեկան ցավ, ցավի զգացողության արտահայտություն նշող բայեր) համար, քանի որ տեղայնացում հնարավոր է կատարել միայն ֆիզիկական մակարդակում:

Նշենք նաեւ, որ այս մոտեցմամբ փորձ ենք արել ֆիզիկական ցավը տեղաբաշխել նաեւ ժամանակի մեջ, ինչը, սակայն, չհաջողվեց՝ ելնելով ցավանիշ բայերի իմաստային առանձնահատկություններից:

Մասնավորապէս, հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ցավի որեւէ զգացողություն կարող է լինել եւ՝ միանգամայն, եւ՝ բազմակի, եւ՝ տեւական, հետեւաբար սահմանազատումը, եթե դա հնարավոր է իրականացնել, երեք լեզուներում էլ շատ աղոտ է: Հմմտ.՝ **flinch- intransitive verb**: to withdraw or shrink from or as if from pain : WINCE; also :to tense the muscles involuntarily in anticipation of discomfort

vomit- intransitive verb 1 :to disgorge the stomach contents 2: to spew forth : BELCH, GUSH

ճաքել, չբ. 1. ճաք բացվել, երկար ու բարակ գծով պատովել: 2. փխբ. Մաստիկ գայրանալ, համբերությունը կորցնել, տրաքվել: 3. Լաց լինելուց՝ դժվարին գործից ուժասպառ լինել:

փսխել, չբ. եւ նբ. 1. Ստամոքսից կերածը հետ տալ՝ բերանով թափել, սիրտ թափել: 2. փխբ. (անարգ.): Անվայելուչ, անպատկառ խոսքեր դուրս տալ, զազրախոսությամբ՝ հայիռյախոսությամբ գայրույթը թափել:

икать-Издавать отрывистые произвольные звуки, вызванные судорожным сокращением диафрагмы.

рыгать- Издавать громкий звук при отрыжке.

3.Երբորդ մոտեցմամբ ցավի զգացողության արտահայտություն նշող բայերը դասակարգվել են **ըստ ուժգնության**.

- Բարձրաձայն (անգլ.՝ *cry, yammer*, հայ.՝ *բղալ, ծղրտալ*, ռուս.՝ *вопить, реветь*) Հմմտ.՝ **cry- intransitive verb** 1 : to call loudly : SHOUT 2 : to shed tears often noisily : WEEP, SOB 3 : to utter a characteristic sound or call 4 : to require or suggest strongly a remedy or disposition

ծղրտալ - Վախից՝ ցավից եւս սուր ճիչ արձակել, ճչալ, ծկլթալ:

2. Բարակ ձայնով գոգոռալ, ճղճալ....


вопить- 1. Разг. Громко, неистово кричать. 2. Причитывать по кому-л., над кем-л., громко плакать; голосить.

- ցածրաձայն (անգլ.՝ *whimper, sigh*, հայ.՝ *ծմրալ, հեկեկալ*, ռուս.՝ *кряхтеть, скулить*) Հմմտ.՝ **whimper-1 : to make a low whining plaintive or broken sound 2 : to complain or protest with or as if with a whimper**
 Ծմրալ- Վախից՝ ցավից են բարակ ձայնով կաղկանձել, վնգստալ: նվաղուն ձայնով անքտնքալ: 3. (անարգ.) Շան ծմրոցի նման ձայն հանել:

Պետք է նշել, որ փորձ ենք արել վերոնշյալ բայերը դասակարգել նաեւ **ըստ ժամանակային տեղաբաշխման**, ինչը, սակայն, հնարավոր չէր կատարել՝ ելնելով այդ բայերի բառարանային սահմանումներից: Նման դասակարգում միգուցե հնարավոր կլիներ կատարել՝ ուսումնասիրելով բայերի գործածությունը խոսույթում, ինչը, սակայն, դուրս էր մեր հետազոտության ձեռնարկի եւ խնդիրների սահմաններից: Ցավի զգացողության արտահայտություն նշող բայերի դասակարգումն ավելի ընդլայնելով ստացել ենք աստիճանակարգում: Պարզվում է, որ ցավի զգացողության արտահայտության ուժգնացումն անցնում է յոթ աստիճաններով.

- Առաջին (ստորին) աստիճանի վրա են գտնվում այն բայերը, որոնց իմաստի մեջ առանձնանում է «**լաց ձեռացնել**» իմակը. (անգլ.՝ *whimper*, հայ.՝ *թնկալ, ճգալ*, ռուս.՝ *բացակայում է մեկ բառույթի սահմաններում*)
 ➤ Երկրորդ աստիճանի վրա են գտնվում այն բայերը, որոնց իմաստը ներառում է «**ցավից բողբոլել**» իմակը. (անգլ.՝ *complain, sigh*, հայ.՝ *թառանչել, տքալ/տնքալ*, ռուս.՝ *сетовать, стенать*)
 ➤ Երրորդ աստիճանի վրա են գտնվում այն բայերը, որոնց իմաստում առանձնանում է «**ցածր/թույլ ձայնով լալ**» իմակը. (անգլ.՝ *mewl, sob*, հայ.՝ *հեկեկալ, նվալ*, ռուս.՝ *ныть, хныкать*)
 ➤ Չորրորդ աստիճանում հայերեն եւ ռուսերեն լեզուներում գտնվում է «**լաց լինել**» իմակը կրող մեկական բայ, իսկ անգլերենում՝ երկու բայ (հմմտ.՝ հայ.՝ *լալ*, ռուս.՝ *плакать* անգլ.՝ *weep, blub*(inf.))
 ➤ Հինգերորդ աստիճանի վրա գտնվող բայերը բնորոշվում են «**ուժգին/տեւականորեն լալ**» իմակով (անգլ.՝ *cry, yammer*, հայ.՝ *զոալ, հեծել*, ռուս.՝ *выть, рыдать*)
 ➤ Վեցերորդ աստիճանի բայերն ունեն «**բարձր ձայն արձակել**» իմակը (անգլ.՝ *holler, yawl*, հայ.՝ *բղավել, որնալ*, ռուս.՝ *орать, рычать*)
 ➤ Յոթերորդ, ամենաբարձր, աստիճանի վրա են գտնվում «**սուր ձայնով ճչալ**» իմակն ունեցող բայերը (անգլ.՝ *screech, yelp*, հայ.՝ *ծկլջալ, ճղալ*, ռուս.՝ *верещать, визжать*)

Գծապատկեր 2.



4. Չորրորդ մոտեցմամբ ուսումնասիրության նյութ հանդիսացող բոլոր ցավանիշ բայերը դասակարգվել են ըստ ուղիղ կամ փոխաբերական իմաստների առկայության: Համաձայն այս դասակարգման առանձնացվել է բայերի մի քանի խումբ, այն է՝ բայեր որոնք ցավանիշ են. 1. միայն ուղիղ իմաստով (անգլ.՝ *ache, beat, cough*, հայ.՝ լալ, կսկծալ, ռուս.՝ плакать, мозжить). 2. միայն փոխաբերական իմաստով (անգլ.՝ *grouse, sough*, հայ.՝ տոգալ, մխալ, ռուս.՝ բացակայում են). 3. ինչպես ուղիղ, այնպես էլ փոխաբերական իմաստով (անգլ.՝ բացակայում են, հայ.՝ թպրտալ, կաղկանձել, ռուս.՝ ныть, скулить)

Այս դասակարգման մեջ բոլոր երեք լեզուներում էլ ի հայտ է գալիս մի ընդհանրություն. մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող բայերի շարքում գերակշռում են այն բայերը որոնք ցավանիշ են միայն ուղիղ իմաստով (հմմտ.՝ անգլ.՝ 96%, այն է՝ 135 բայ 140-ից, հայ.՝ 88%, այն է՝ 83 բայ 94-ից, ռուս.՝ 88%, այն է՝ 45 բայ 51-ից):

Անգլերենում միայն փոխաբերական իմաստով ցավանիշ է ընդամենը երկու բայ՝ *grouse, sough*: Ուշագրավ է, որ անգլերենում ուղիղ եւ փոխաբերական իմաստով ցավանիշ բայեր ընդհանրապես չկան:

Հայերենում միայն փոխաբերական իմաստով բայերը 5- են՝ բողալ (2-փխբ), գոալ (-2-փխբ), մխալ (2-փխբ, 4-փխբ), նվալ (3-փխբ.), տոգալ (2-փխբ), իսկ ուղիղ եւ փոխաբերական իմաստով բայերը՝ 6-ը՝ ապաշխարել (1,2,3-փխբ), թպրտալ (1, 3-փխբ), կաղկանձել (1, 2-փխբ), հեկեկալ (1, 2-փխբ, 3-փխբ), պապակել (1, 3-փխբ), վնգալ (1, 2-փխբ, 4-փխբ):

Ռուսերենի առանձնահատկությունն այն է, որ չկան միայն փոխաբերական իմաստով ցավանիշ բայեր, իսկ ուղիղ եւ փոխաբերական իմաստով բայերը 4-ն են՝ мутить (-2-փոխ, 4-խոս), ныть (-1-ուղ եւ փխբ, 2,3-խոս), скулить (1-գր եւ խոս, 2-փխբ.), хныкать (խոս-1, 2-փխբ):

5. Հինգերորդ մոտեցմամբ բայերը դասակարգվել են ըստ նրանցում առկա ցավանիշ իմաստների քանակի եւ տեղի: Առաջին հերթին

առանձնացվել են մենիմաստ (անգլ.՝ *ail, yelp*, հայ.՝ *ճղավել, մզգալ*, ռուս.՝ *визжать, мозжить*) եւ բազմիմաստ (անգլ.՝ *ache, beat*, հայ.՝ *բղավել, լալ*, ռուս.՝ *кричать, ныть*) բայեր:

Բազմիմաստ բայերի շարքում առանձնացվել են միայն մեկ իմաստով ցավանիշ (1. առաջնային իմաստով. անգլ.՝ *cringe, scream*, հայ.՝ *ծղրտալ, հեւալ*, ռուս.՝ *знобить, рычать*, 2. երկրորդական իմաստով. անգլ.՝ *crack, tingle*, հայ.՝ *ճաքել, նվալ*, ռուս.՝ *гудеть, реветь*) եւ երկու կամ ավելի իմաստներով ցավանիշ (1. առաջնային իմաստի առկայությամբ. անգլ.՝ *cry, hurt*, հայ.՝ *բքնել, նվալ*, ռուս.՝ *збынуть, ныть*, 2. երկրորդական իմաստների առկայությամբ. անգլ.՝ *burn, freeze* հայ.՝ *մխալ, սառել*, ռուս.՝ *гореть, мерзнуть*) բայեր:

Ուսումնասիրվող երեք լեզուների համար հատկանշական է, որ մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող բառակայության շրջանակներում բազմիմաստ բայերն ավելի մեծ թիվ են կազմում, քան մենիմաստները, ընդ որում հայերենն այս առումով առաջին տեղում է (հմմտ.՝ անգլ.՝ 33%, այն է՝ 105:35, հայ.՝ 12%, այն է՝ 84:10, ռուս.՝ 34%, այն է՝ 38:13):

Առաջնային իմաստով ցավանիշության հատկանիշը եւս ընդհանուր է երեք լեզուների հետազոտվող բայերի համար: Այս օրինաչափությունը հիմնավորվում է նրանով, որ ուսումնասիրության նյութ են հանդիսանում զուտ ցավանիշ բայերը, եւ ոչ թե այլ իմաստային դաշտերի պատկանող «դոնոր» բայերը (Рудницкая Е. Л., Новичков П. Ю. <http://www.vestnik.vsu.ru/pdf/lingvo/2010/01/2010-01-17.pdf>, 6-7): Այս բայերը նաեւ առանձնանում են ոճային չնշութավորվածությամբ եւ ուղիղ ցավանիշ իմաստի առկայությամբ:

Հմմտ.՝ **suffocate-** 1: to become suffocated: a (1) : to die from being unable to breathe (2) : to die from lack of oxygen b : to be uncomfortable through lack of fresh air 2 : to become checked in development

Կսկծալ, չբ. 1. Ցավ տալ, մրմռալ: 2. Մորմոքել, վիշտ զգալ, վշտահար լինել, մղկտալ: 3. Ափսոսանք զգալ, ափսոսալ:

Ի տարբերություն անգլերենի՝ երկրորդական իմաստով/իմաստներով ցավանիշությունը ռուսերենում զուգակցվում է ոճական նշութավորվածության, իսկ հայերենում՝ փոխաբերական իմաստի առկայության հետ:

Հմմտ.՝ **bleat-** 1 a : to make the natural cry of a sheep or goat; also : to utter a similar sound b : WHIMPER 2 a : to talk complainingly or with a whine b : BLATHER

բայց՝ մխալ, չբ. 1. Մուխ արձակել, ծխալ: 2. փխբ. Այրվել, տոչորվել: 3. փխբ. Ոխակալությամբ լցվել: 4. փխբ. Տանջվել, տառապել:

гудеть-1. Издавать длительный протяжный низкий звук, гул.
 2. Издавать протяжные низкие звуки, сигналы с помощью особого приспособления; давать гудки. 3. *Прост.* Непрерывно, сильно ныть (об ощущении боли, усталости).

Այսինքն, եւ՝ անգլերենում, եւ՝ հայերենում, եւ ռուսերենում, եթե բայը ցավանիշ է առաջնային իմաստով, ապա այն հիմնականում ռճականորեն չնշութավորված է եւ ունի ուղիղ ցավանիշ իմաստ: Ռուսերենում եւ հայերենում, եթե բայը ցավանիշ է ոչ առաջնային իմաստով, ապա սովորաբար ցավանշությունը նրանում կամ արտահայտված է փոխաբերաբար եւ/կամ այն կարող է լինել ռճականորեն նշութավորված:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք հետեւյալ եզրակացության.

- Անգլերենում արմատական ցավանիշ բայերն ավելի մեծ թիվ են կազմում հայերենի եւ ռուսերենի համեմատությամբ: Ընդ որում, ռուսերենը զիջում է մյուս երկու լեզուներին, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ ռուսերենում մեծ թիվ են կազմում ածանցավոր ցավանիշ բայերը, որոնք միեւնույն զգացողության տարբեր նրբերանգներն են հաղորդում (օրինակ.՝ *выть* - *завывать, отвыть, повывать, повыть, подвыть; кричать - крикнуть, вскрикнуть, выкрикнуть, окрикнуть, подкрикнуть, прикрикнуть*)
- Ցավի զգացողության տեղայնացման հետ կապված ի հայտ է գալիս մի օրինաչափություն՝ կապված ցավի համամարդկային ֆենոմեն լինելու հետ: Բոլոր երեք լեզուներում ցավի տեղայնացում նշող բայերն իմաստային առումով տեղաբաշխվում են վերոնշյալ խմբերում գրեթե նույնությամբ՝ չնչին տարբերություններով (օրինակ՝ ցավի զգացողություն մարմնի որեւէ առանձին մասում՝ անգլ.՝ *belch*, հայ.՝ *զկռռալ*, ռուս.՝ *икать*, ցավի զգացողություն ամբողջ մարմնում՝ անգլ.՝ *tremble*, հայ.՝ *սարսռալ*, ռուս.՝ *трепетать* են)
- Բոլոր երեք լեզուներում մեր ուսումնասիրության նյութ հանդիսացող բայերի շարքում գերակշռում են այն բայերը որոնք ցավանիշ են միայն ուղիղ իմաստով (հմմտ.՝ անգլ.՝ 96%, հայ.՝ 88%, ռուս.՝ 88%)
- Ուսումնասիրվող երեք լեզուների համար հատկանշական է, որ ուսումնասիրվող բառանյութի շրջանակներում բազմիմաստ բայերն ավելի մեծ թիվ են կազմում, քան մենիմաստները (հմմտ.՝ անգլ.՝ 33%, հայ.՝ 12%, ռուս.՝ 34%)
- Առաջնային իմաստով ցավանիշության հատկանիշը եւս ընդհանուր է երեք լեզուների բայերի համար: Այս բայերը նաեւ առանձնանում են ռճային չնշութավորվածությամբ եւ ուղիղ ցավանիշ իմաստի առկայությամբ

References:

- 1) Авилова Н.С. Вид глагола и семантика глагольного слова. - М.: Наука, 1976. - 328с.
- 2) Аспекты сематических исследований / Уфимцева А. А., Кубрякова Е. С. и др., Наука, 1980.-356 с
- 3) Васильев Л.М. Семантика русского глагола. Глаголы речи, звучания и поведения: Учеб. пособие. - Уфа: Башк. ун-т, 1981.
- 4) Болдырев Н.Н. Функциональная категоризация глагола как проявление динамического аспекта его значения //К юбилею ученого. Сб. научных трудов к юбилею Е.С.Кубряковой. – М.: МГПУ, 1997. – С.48-51.
- 5) Большая медицинская энциклопедия: В 30 т. Изд. 3-е. Т. 3. М.: Сов. энциклопедия, 1976. С. 294-297.
- 6) Бонч-Осмоловская, А.А., Рахилина, Е.В., Резникова, Т.И.: 2007, '*Концептуализация боли в русском языке: типологическая перспектива*', Компьютерная лингвистика и интеллектуальные технологии: Труды международной конференции Диалог'2007, Москва. URL: <http://www.dialog-21.ru>
- 7) "Концепт боль в типологическом освещении" / Ред. В. М. Брицын, Е. В. Рахилина, Т. И. Резникова, Г. М. Яворская. – К.: Видавничий Дім Дмитра Бураго, 2009. – 424 с.
- 8) Плунгян В.А., Рахилина Е.В. О лексико-семантической типологии // Глаголы движения в воде: лексическая типология / Ред. Майсак Т.А., "Рахилина Е.В. М.: Индрик, 2007.-С. 10-26.
- 9) Резникова Т. И. *Глаголы боли в свете Грамматики конструкций* / Т. И. Резникова, А. А. Бонч-Осмоловская, Е. В. Рахилина // Научно-техническая информация. Серия 2, Информационные процессы и системы. – 2008 – № 4. – С. 7–15.
- 10) Рудницкая Е. Л., Новичков П. Ю., *Английские номинации болевых и неприятных ощущений с позиций лексико-семантической типологии* / <http://www.vestnik.vsu.ru/pdf/lingvo/2010/01/2010-01-17.pdf>
- 11) Хайдарова Г.Р. *Феномен боли в европейской культуре*, <http://www.paininfo.ru/articles/2499.html>
- 12) Чижова Х. А. *Языковая категория боль в русском языковом сознании*. Лингвистика № 2 (20), 2010 A. Schopenhauer's sämtliche Werke / Hrsgn. v. Julius Frauenstädt. 2. Aufl: Neue Ausgabe. Bd.2. – Leipzig : Brockhaus, 1891. – 567 с.
- 13) Шиляева, Т.Ю. Проблема семантической классификации глаголов. Электронный ресурс. / Т.Ю. Шиляева // <http://lingvomaster.ru/files/212.pdf>.
- 14) Bailey, C.A. and Davidson, P. O. *The language of pain: Intensity*. *Pain*. 28 (1987), 185-195.
- 15) Lewandowski W., Good M., Draucker C. B., *Changes in the Meaning of Pain with the Use of Guided Imagery: Pain Language*. *Pain Manag Nurs*. 2005;6(2):58-67

Comparative Analysis of Semantic Peculiarities of English, Armenian and Russian Pain Verbs

The concept of pain and the problem of its language representation have been broadly discussed both in theoretical and practical perspectives in different scientific fields. This is one of the first attempts to investigate pain in linguistic perspective.

The research presents a study in lexical typology. It puts forward a methodology for multidimensional classification of the pain verbs and presents the results of its application to the data from English, Armenian and Russian Languages.